Հավելված

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի

Սպիտակ համայնքի ավագանու

2022 թվականի թիվ _____ - Ա որոշման

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## Սպիտակ համայնքի (ներառյալ բնակավայրերի) 2021 թվականի բյուջեի կատարման մասին Սպիտակ համայնքի ղեկավարի

Սպիտակ համայնքի 2021թ. բյուջեն կատարվել է՝

**1. <u>Եկամուտների մասով</u>՝** նախատեսված 2 063 565,7 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 2 025 765,7 հազար դրամ, կամ կատարողականը կազմել է 98,2 տոկոս:

**Տարեսկզբի ազատ մնացորդը** կազմել է 510 445,0 հազար դրամ:

**2. <u>Ծախսերի կատարման մասով</u>** բյուջեն կատարվել է 89,1 տոկոսով, նախատեսված 2 574 010,7 հազար դրամի դիմաց դրամարկղային ծախսերը կազմել են 2 294 325,5 հազար դրամ:

**<u>Վարչական բյուջեի եկամուտները</u>** նախատեսված 1 369 864,9 հազար դրամի դիմաց փաստացի կազմել են 1 370 323,2 հազար դրամ: Կամ կատարողականը կազմել է 100,0 տոկոս:

- Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհների (դոտացիա) գծով եկամուտները նախատեսված 1 045 182,9 հազար դրամի դիմաց փաստացի ֆինանսավորվել է 1 045 182,9 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 100,0 տոկոս:

- Պետական բյուջեից երաժշտական դպրոցում ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցման համար համայնքի վարչական բյուջեին տրամադրվող սուբվենցիայից նախատեսվել է 4 795,3 հազար դրամ, փաստացի ֆինանսավորվել է 2 398,0 հազար դրամ:

**<u>Վարչական բյուջեի սեփական եկամուտների</u>** մասով՝ (հարկեր և տուրքեր, այլ եկամուտներ, բացի անշարժ գույքի իրացումից) նախատեսված 319 889,5 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 322 743,0 հազար դրամ կամ սեփական եկամուտների գծով կատարվել է 100,8 տոկոսով:

**ա) Գույքային հարկեր անշարժ գույքից՝** նախատեսված 67 580,0 հազար դրամի դիմաց փաստացի հավաքագրվել է 53 312,3 հազար դրամ: Կատարողականը կազմել է 78,8 տոկոս:

**բ) Գույքահարկ փոխադրամիջոցների համար** նախատեսվել է 138 734,9 հազար դրամ, հաշվետու ժամանակահատվածում հավաքագրվել է 156 144,6 հազար դրամ: Կատարողականը կազմել է 112,5 տոկոս:

**գ) Պետական տուրքեր**

Պետական տուրքերի մասով՝ բյուջեով նախատեսված եկամուտները 5 800,0 հազար դրամի դիմաց փաստացի կազմել են 7 367,3 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 127,0 տոկոս:

**դ) Տեղական տուրքեր**

Տեղական տուրքերի գծով եկամուտները նախատեսված 11 330,0 հազար դրամի դիմաց փաստացի կազմել են 9 333,7 հազար դրամ կամ տեղական տուրքերի գծով բյուջեն կատարվել է 82,3 տոկոսով: Այդ թվում՝

- Տեղական տուրք շենքերի, շինությունների շինարարության թուլտվության,
- Համայնքի տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի,
- Համայնքի տարածքում ծխախոտի արտադրանքի վաճառքի,
- Համայնքի տարածքում՝ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի,
- Համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու,
- Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի,
- Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թուլտվության համար:

**ե) Այլ եկամուտների մասով**

- Մուտքեր տուժերից, տուգանքներից նախատեսված 600,0 դրամի դիմաց փաստացի կազմել է 1 500,0 հազար դրամ, կամ կատարողականը կազմել է 250,0 տոկոս:
- Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ այլ եկամուտներ հաշվետու ժամանակաշրջանի համար գումար նախատեսվել է 14 360,0 հազար դրամ, փաստացի կատարվել է 11 153,4 հազար դրամ:
- Գույքի (հողերի) վարձակալություն՝ նախատեսված 21 190,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքը կազմել է 20 066,2 հազար դրամ:Կատարողականը կազմում է 94,6 տոկոս:
- Տեղական ինքնակառավարման մարմիններին պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման՝ Քաղաքացիական կացության ակտերի գրանցման գրասենյակ առանձնացված ստորաբաժանման ծախսերի ֆինանսավորման համար կանխատեսվել է 5 474,3 հազար դրամ, ՀՀ պետական բյուջեից փաստացի ֆինանսավորվել է 4 895,1 հազար դրամ:
- Վարչական գանձումների մասով համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց՝
  - աղբահանության վճարներ նախատեսվել է 28 675,0 հազար դրամ, հավաքագրվել է 26 618,0 հազար դրամ: Կատարողականը կազմում է 92,8 տոկոս:
  - ջրամատակարարման վճարներ նախատեսվել է 750,0 հազար դրամ, հավաքագրվել է 1 305,9 հազար դրամ:
  - ծնողական միջոցներ (նախադպրոցական կրթություն՝ մանկապարտեզներ, արտադպրոցական կրթություն՝ երաժշտական և գեղարվեստի դպրոցներ,մշակույթի տուն) նախատեսվել է 12 940,9 հազար դրամ, փաստացին կատարվել է 16 651,0 հազար դրամ: Կատարողականը կազմում է 128,6 տոկոս:

- Տեղական այլ վճարների (բազմաբնակարան բնակելի շենքերի պարտադիր նորմերի պահպանություն, անասնաբույժի ծառայություններ և այլն) գծով նախատեսված 5 420,0 դրամի դիմաց հավաքագրվել 4 992,2 հազար դրամ: Կատարողականը կազմում է 92,1 տոկոս:
- Համայնքի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու համար հաշվետու ժամանակաշրջանի համար նախատեսվել է 500,0 հազար դրամ, փաստացի մրցույթ չի կատարվել:
- Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառույցների, շենքերի շինությունների օրիկանացման վճար՝ նախատեսվել է 6 534,4 հազար դրամ, փաստացին կատարվել է 9 402,4 հազար դրամ: Կատարողականը կազմում է 143,8 տոկոս:

Վարչական բյուջեի տարեսկզբի մնացորդը կազմել է 12 027,4 հազար դրամ:

**<u>Ֆոնդային բյուջեի եկամուտներ</u>**

Ֆոնդային բյուջեի եկամուտները նախատեսված 601 831,0 հազար դրամի դիմաց փաստացի կազմել են 557 444,0 հազար դրամ:

Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումները կազմել են 233 130,0 հազար դրամ:

Ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը կազմել է 498 417,6 հազար դրամ:

Անշարժ գույքի իրացման մասով՝ նախատեսված 219 768,5 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 97 998,0 հազար դրամ:

**<u>Վարչական բյուջեի ծախսեր</u>**

**<u>Վարչական բյուջեի ծախսերը՝</u>** նախատեսված 1 381 892,2 հազար դրամի դիմաց կատարվել են 1 241 660,0 հազար դրամով կամ կատարողականը կազմել է 90,0 տոկոս:

**ա) Ապարատի պահպանման ծախսեր՝** նախատեսված 536 745,6 հազար դրամի դիմաց կատարվել են 495 093,1 հազար դրամով կամ կատարողականը կազմել է 92,2 տոկոս:

**բ) Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ՝** (այդ թվում Սպիտակ համայնքի ՔԿԱԳ) նախատեսված 10 914,8 հազար դրամի դիմաց կատարվել են 8 786,7 հազար դրամ: Կատարողականը կազմել է 80,5 տոկոս, որից փաստացի ծախսերը.

- ՔԿԱԳ – 5 199,0 հազար դրամ,
- տրանսպորտային ծառայություններ – 3 587,7 հազար դրամ:

**գ) Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ՝** նախատեսված 34 628,4 հազար դրամի դիմաց կատարվել են 29 993,3 հազար դրամ: Կատարողականը կազմել է 86,6 տոկոս, այդ թվում.

- Լոռու մարզի Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն ՀԿ- 5 838,0 հազար դրամ:

**դ) Հասարակական կարգ և անվտանգություն (փրկարար ծառայություն)՝** նախատեսված 330,0 հազար դրամի դիմաց կատարվել են 50,0 հազար դրամ:

**ե) Տնտեսական հարաբերություններ՝** նախատեսված 63 982,7 հազար դրամի դիմաց կատարվել են 52 304,1 հազար դրամ:Կատարողականը կազմել է 81,7 տոկոս, այդ թվում՝

- գյուղատնտեսություն (անասնաբուժական ծառայություն) - նախատեսված 16 037,5 հազար դրամի դիմաց կատարվել են 10 256,7 հազար դրամ: Կատարողականը կազմել է 63,9 տոկոս:

- անտառային տնտեսություն՝ նախատեսված 1 000,0 հազար դրամի դիմաց կատարվել են 397,2 հազար դրամ:Կատարողականը կազմել է 40,0 տոկոս:
- ճանապարհային տնտեսություն նախատեսված 45 088,2 հազար դրամի դիմաց կատարվել են 39 934,0 հազար դրամ:Կատարողականը կազմել է 88,6 տոկոս:
- ոռոգում նախատեսված 957,0 հազար դրամի դիմաց կատարվել են 863,0 հազար դրամ: Կատարողականը կազմել է 90,2 տոկոս:
- էներգետիկա (արևայինի ֆակտորինգ) նախատեսված 900,0 հազար դրամի դիմաց կատարվել են 853,0 հազար դրամ:Կատարողականը կազմել է 94,7 տոկոս:

**զ) Շրջակա միջավայրի պաշպանություն** ՝ նախատեսված 58 034,0 հազար դրամի դիմաց ծախսվել է 50 928,5 հազար դրամ, կատարողականը կազմել է 87,8 տոկոս,որից՝

- աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների վճարներ 49 433,2 հազար դրամ:
- կեղտաջրերի հեռացման համար 369,7 հազար դրամ:
- այլ ծախսեր՝ 1 125,6 հազար դրամ:

**է) Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ**՝ նախատեսված 94 182,1 հազար դրամի դիմաց ծախսվել է 82 334,9 հազար դրամ:Կատարողականը կազմել է 87,4 տոկոս, որից՝

– Փողոցների լուսավորություն՝ նախատեսված 36 656,5 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 34 356,0 հազար դրամ,
- Ջրամատակարարում նախատեսված 13 859,3 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 12 369,5 հազար դրամ,
-Բնակարանների կոմունալ սպասարկում («Սպիտակի բնակարանների և ենթակառուցվածքների սպասարկման գրասենյակ» ՀՈԱԿ)- նախատեսված 43 666,1 հազար դրամի դիմաց կատարվել է 35 609,2 հազար դրամ:

**ը) Հանգիստ, մշակույթ, սպորտ և կրոն** («Սպիտակի քաղաքային գրադարան» ՀՈԱԿ, «Սպիտակի մշակույթի տուն» ՀՈԱԿ սպորտային և այլ մշակութային միջոցառումներ) նախատեսված 70 163,8 հազար դրամի դիմաց կատարվել են 59 207,0 հազար դրամ: Կատարողականը կազմել է 84,4 տոկոս, այդ թվում՝

- Համաքաղաքային միջոցառումների կազմակերպելու համար նախատեսվել է 20 317,0 հազար դրամ, փաստացի կատարվել է 12 391,6 հազար դրամ, կամ կատարողականը կազմել է 61,0 տոկոս:
- «Սպիտակի քաղաքային գրադարան» ՀՈԱԿ- նախատեսվել է 18 345,2 հազար դրամ, փաստացի կատարված ծախսերի դիմաց ֆինանսավորվել է 17 945,5 հազար դրամ: Կատարողականը կազմել է 97,8 տոկոս:
- «Սպիտակի մշակույթի տուն» ՀՈԱԿ- նախատեսվել է 25 951,6 հազար դրամ, փաստացի կատարված ծախսերի դիմաց ֆինանսավորվել է 24 769,8 հազար դրամ:Կատարողականը կազմել է 95,4 տոկոս:
-ընդհանուր բնույթի այլ ծառայություններ (հրապարակի շատրվանի սպասարկում) նախատեսվել է 4 000,0 հազար դրամ, փաստացի կատարված ծախսերի դիմաց ֆինանսավորվել է 4 000,0 հազար դրամ:

- հեռուստահաղորդումներ նախատեսվել է 1550,0 հազար դրամ, փաստացի կատարվել է 100,0 հազար դրամ:

**թ) Կրթություն՝** նախատեսված 232 611,0 հազար դրամի դիմաց փաստացի ծախսվել է 206 878,4 հազար դրամ: Կատարողականը կազմել է 89,0 տոկոս, այդ թվում՝

- Նախադպրոցական կրթություն (թվով 6 մանկապարտեզներ)՝ նախատեսվել է 145 067,8 հազար դրամ, փաստացի կատարված ծախսերը կազմել են 122 529,0 հազար դրամ: Կատարողականը կազմել է 84,5 տոկոս:

- Արտադպրոցական կրթություն ( գեղարվեստի դպրոց և թվով 2 երաժշտական դպրոցներ)՝ նախատեսվել է 67 240,1 հազար դրամ, փաստացի կատարված ծախսերը կազմել են 66 222,1 հազար դրամ:Կատարողականը կազմել է 98,5 տոկոս:

- Հիմնական ընդհանուր կրթություն՝ նախատեսվել է 80,0 հազար դրամ, փաստացի կատարվել է 45,0 հազար դրամ:Կատարողականը կազմել է 56,2 տոկոս:

- Միջնակարգ ընդհանուր կրթություն՝ նախատեսվել է 18 183,0 հազար դրամ,փաստացի կատարվել է 16 707,3 հազար դրամ: Կատարողականը կազմել է 91,8 տոկոս:

- Բարձրագույն մասնագիտական կրթություն՝ նախատեսվել է 2 040,0 հազար դրամ,փաստացի կատարվել է 1 375,0 հազար դրամ: Կատարողականը կազմել է 67,4 տոկոս:

**ժ) Սոցիալական պաշտպանությանն** ուղղված ծախսերը նախատեսվել 26 515,0 հազար դրամ՝ հատկացվել է 22 254,0 հազար դրամ: Կատարողականը կազմել է 83,9 տոկոս:

**ի) Ծերություն** «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ–ի հետ համատեղ իրականացվող Սպիտակ քաղաքի սոցիալապես անապահով տարեցների, հաշմանդամների և այլ անապահով խավերի առաջնային սոցիալական խնդիրների լուծմանն ուղղված (սնունդ, բուժօգնություն, իրավական և այլ խորհրդատվություններ) ծրագրի ընդհանուր բյուջեն կազմել է 10 800,0 հազար դրամ, որից 2 800,0 հազար դրամը ներդրվելու է համայնքի բյուջեից: Ֆինանսավորվել է 700,0 հազար դրամ համաձայն ներկայացված հաշվետվության:

- **Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե նախատեսվել է հատկացնել 282 914,1 հազար դրամ, փաստացի հատկացվել է 233 130,0 հազար դրամ:**

**<u>Ֆոնդային բյուջեի ծախսեր</u>**

Ֆոնդային բյուջեով հաշվետու ժամանակահատվածում նախատեսվել է 1 575 086,9 հազար դրամի ծախսեր (որից 219 768,5 հազար դրամը հիմնական միջոցների իրացումից), դրամարկղային ծախսը կազմել է 1 285 793,8 հազար դրամ (որից 97 998,0 հազար դրամը հիմնական միջոցների իրացումից), որից՝

- **Ապարատի պահպանման ծախսեր՝** նախատեսված 67 704,0 հազար դրամի դիմաց կատարվել է 61 059,5 հազար դրամ:Վերանորոգվել է քաղաքացիների համար սպասարկման գրասենյակը, ձեռք են բերվել համակարգիչներ և այլ սարքավորումներ:

**- Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ՝** նախատեսված 118 053,3 հազար դրամի դիմաց կատարվել են 106 537,5 հազար դրամով:

- **Հասարակական կարգ և անվտանգություն (փրկարար ծառայություն)՝** նախատեսված 2 050,0 հազար դրամի դիմաց կատարվել են 1 085,0 հազար դրամ:

- **Տնտեսական հարաբերություններ,Էներգետիկայի և տրանսպորտի բնագավառում՝** ծախսերը կազմել են 581 160,4 հազար դրամ (տրանսպորտի ձեռքբերում, գազատարի կառուցում, հենապատի նորոգում,ճանապարհների կառուցում և այլն):

-**Շրջակա միջավայրի պաշտպանություն՝** ծախսերը կազմել են 16 423,3 հազար դրամ (հրապարակի նստարաններ, աղբարկղ):

- **Բնակարանային շինարարություն՝** ծախսերը կազմել են 230 305,9 հազար դրամ:

- **Փողոցային լուսավորություն՝** ծախսերը կազմել են 161 244,1 հազար դրամ:

- **Հանգիստ, մշակույթ և կրոն՝** փաստացի ծախսը կազմել է 119 329,0 հազար դրամ (այդ թվում՝ զբոսայգու զուգարանի վերանորոգում,հուշահամալիրի կառուցում,ջրավազանի աշխատանքներ և այլն):

- **Կրթություն** փաստացի ֆինանսավորվել է 8 649,1 հազար դրամ: